ների շնորհիւ Փէրիայի հայերն ընդհանրապէս պարապում են երկրագործութեամբ (այն էլ բոլորովին նահապետական ձևով), անասնապահութեամբ և մասամբ էլ խաշնարածութեամբ, որից ստացած բրդից կանայք պատրաստում են գորգ, կարպետ, թաղիք, շալ, ջէջիմ, տոպրակ, անկողին, գուլպայ, մի խօսքով իրենց բոլոր շորերն իրենք են պատրաստում։ Այդ գործածքները թէև այնքան նուրբ և գեղեցիկ չեն, բայց յատնի են իրենց տոկունութեամբ։

Այգեմշակութիւնը նոյնպէս իր պատուաւոր տեղն է բռնում։ Խաղողից գիւղացիք պատրաստում են այնքան գինի, որքան իրենց պէտք է, իսկ մեծ մասը չորացնում են ու չամիչ և կամ թանձր շիրա են պատրաստում և յաճախ պաս օրերին գործ ածում, մանաւանդ ձմեռը։

Մեղուաբուծութիւնը զարգացած է այն գիւղացիների մէջ միայն, որոնց գիւղերն գտնուում են լեռների լանջին։ Յայտնի է Ախուռայի, Սիպակ-Ջաղջաղի և Խօնսարու մեղրը։ Շերամաբուծութիւնը գոյութիւն չունի։ Հայ գեղջկուհիները կաւէ աման ձեռքով շինելու մէջ վարպետ են։ Նրանք շինում են կաւէ կճուճ, պտուկ, կուժ, թաս և այլն։ Կան նաև քիչ թւով առևտրականներ, մանրավաճառներ, մսագործներ, հիւսներ, դարբիններ, դերձակներ, ջրաղացպաններ, կօշկակարներ, սափրիչներ, չարուադարներ, մշակներ և այլ մանր գործաւորներ։

Մշակութիւն, պարարտացում։ Փէրիայում գիւղացիների գլխաւոր զբաղմունքն երկրագործութիւնն է, որի համար նպաստում է գաւառի արգաւանդ ու բերրի հողը, որը կազմուած է մեծ մասամբ հողային ու կաւային շերտերից և առհասարակ մութ շագանակագոյն կամ տիպական՝ սև գոյն ունի։ Հերկում են արօրով, 2—3 վերշօկ խորութեամբ, որ պահանջում է միայն երկու լուծ, այսինքն երկու զոյգ եզ։ Հնձում են նահապետական մանգաղներով ու գերանդիներով։ Հողը երբէք չէ հանգստանում, այլ անդադար մշակուում է. պարարտացնում են երեք տարին մի անգամ աղբով կամ կորըն-